

իւր գեղեցիկ գաղափարի իրականացումը մի նոր աշխատութեամբ, պ. Կոստանեանը շատ մեծ ծառայութիւն մատուցած կ'լինի հայ քանասիրութեան, եթէ ձեռնարկի գրելու և ուսն հեղինակների անուանացուցակը, որոնք ոչ միայն ճանապարհորդել են Հայաստան, այլ և գրել են հայոց պատմութեան և գրականութեան մասին, որպէս և ուսաց **АКТЫ** հրատարակութիւնների մէջ եղած տեղեկութիւնների ցանկը:

Գ. Եճգիրտեան

ՀԱՅ-ՌՈՒՄ ԲԱՌԱՐԱՆ. ԿԱԶՄԵՑ ՅԱՐ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

Խմբագրութիւնս ստացաւ Յ. Թումանեանի կազմած նոր հայ-ռուս բառարանի մի օրինակ: Աշխատասիրողը, որ անյայտ չէ հայ հասարակութեան իր գրական աշխատասիրութիւններով, այդ բառգիրքը յարմարեցրել է հայ աշակերտների հասակին, շեշտադրութիւններով և քերականական ծանօթութիւններով:—Վաղուց արդէն զգալի էր այդպիսի մի բառգրքի կարևորութիւնը թէ ուսանող դասի և թէ հասարակ ընթերցող ժողովրդի համար ուսն լեզուն ուսանելու գործում և այդ ծառայութիւնը իւր նոր աշխատութեամբ բաւական բարեխիղճ կերպով կատարել է պ. Թումանեանը:

Յանձնարարում ենք այդ գիրքը հայ աշակերտներին և ընթերցող ժողովրդին, իբրև ներկայումս եղած բառարաններից յարմարը թէ ըստ ծաւալին, թէ ըստ գնի և թէ ըստ բովանդակութեան:

Հայ

ՄՏԱՑՈՒՄԻ ԳՐԳԵՐ

Կ. Կոստանեանց. Հայագիտութիւնն Արևմտեան Եւրոպայում, համառոտ տեսութիւն և գրացուցակ. Թիֆլիս 1910 զ. 1 ու.
Գարբ. Սունդուկեանց (նոյն և Համմաւ.) Սէր և ազատութիւն, կատակ. հինգ արարուածով. Թիֆլիզ 1910 զ.

Գարեգին ք. Ասրեան. Մեր հոգսերը. հրատ. Աբգար Յակոբեանի.
Թիֆլիս 1910 զ. 30 կ.

Գ. Շէրենց. Ալթուն դէրէսի կամ մի գիշեր Բաղէշի բանտում.
1893—96. Թիֆլիզ 1910 զ. 20 կ.

Արտակ Վ. Սմբատեանց. Հենրի Դրումմոնդի՝ Ամենագեղեցիկ բանը
կեանքում. անգլիերէնի գերմ. փոխադրութիւնից թարգ.
Վաղարշ. 1911 զ. 15 կ.

Զաւէն Վ. Դէպի գեղարուեստի հայրենիքը. ճանապարհորդութիւն
դէպի Յունաստան. Բագու 1910 զ. 50 կ.

Շուշի-Գանձակ ճանապարհի համառօտ հաշիւ. Շուշի 1910.